89199-84
Ն 4-85

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1981 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՌԱՇՆԵՐ ԵՒ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

որ պարունակում է

Հանուագան Բարոյական, Տնտեսական և Կրօնական

խորհուրդներ։

Ժողովեալ և բացայայտեալ

Ի Յովհաննէսէ Մ. Աղգանեանց

Հայանուանէալ

ՍԱՅԱԹՆՈՎ։

4/566
6159

ՍԱՆԿՏՊԵՏԵՐԲՈՒՐԳ
Ի Տպարանի Կայսերական Գէմսարանի Գիտութեանց։
1857.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. С.-Петербургъ, 14 Сентября 1857 года.

Цензоръ *В. Бекетовъ.*

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Լուսաւորեալ Լեբրայեցիներուն ջանքը և հետեւողութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդկային լուսաւորութիւնը և երջանկութիւնը. և նոքա իւրեանց անխոնջ աշխատութիւններովը և գործքերովը ուղղակի ընթանում են դէպ յիւրեանց նպատակը։ Բայց քիչ համարելով իւր սեպհական ազգի երջանկութիւնը, ձեռք են բերում նոքա նաև զանազան ազգաց պատմութիւնները և աշխատում են քննել, բայայայտել նոցա բնաւորութիւնը, քաղաքականութիւնը, գրականութիւնը և այլ նոցա հանգամանքը, և որոց ժամանակ առ ժամանակ հրատարակում են զանազան լեզուի լրագիրներու և օրագիրներու ձեռամբը։

Այս ձեռնարկութիւնը՝ մեծ օգուտ է բերում ազգային պատմութեանը, որոց ինչպէս հայելւոջ մէջը պարզապէս տեսանում եմք իւրաքանչիւր ազգի պատկանեալ սեպհական ձիրքը, խելամտութիւնը, բարքը և այլ բնաւորութիւնները։

Այս նպատակաւ մեր Հայկական նորաբողջ գրականութիւնը (*) խրախուսած հարկաւոր տեսանում եմք նորանոր թեթևանիթ հատուածներու մէջ ազգային պատմութիւններից քաղած՝ ի լոյս ընծայած փոքրիկ տետրակներով՝ բազմատեսակ ազգային երգեր, աւանդութիւններ և այլ զանազան պատմաբանական վէպեր. որով բացում է հասարակ ժողովուրդների ախորժակը դէպ ի յընթերցանութիւնը, և այս կերպիւ սր բան օրէ բազմանում են մեր սիրելի ազգի մէջ ընթերցասիրութիւնը. որոց ժամանակով յոյս ունիմք որ տարածուի և մեր ազգակիցներու մէջ Լուսոպացւոց երջանիկ լուսաւորութեան շառաւիղները։

Այս դիտաւորութեամբը մեք ևս ժողովեցինք քանի մի տեղական ազգային հնազոյն ասացուածներ և աւանդութիւններ, և այլ զանազան սնապաշտ և մոլորական կարծիքներ և արարողութիւններ, և սոցանից կազմեցինք այս փոքրիկ տետրակը՝ հետևեալ

(*) Նորաբողջ գրականութիւն ասում է նոր գրական և գրական հոլի Ա[illegible] Հայերս մեջ, այլ ոչ թե Աստուածաբանական և վարդապետական գրքերս համար, որովհետև որոնց մեջ ալեր շատ հարուստ և հնագոյն է որչափ ալ գեղեցիկ, քանզի այլ տեղերունց մեջ Հայկական լուսաւորութիւնը, զրադիներեր, զրաշնագիներեր և այլ որոնց հետ Լու-

անունովը՝ «ԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՆՑՆԵՐ և ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ»։ Յորոց շատերը պարունակում են իւրեանց մէջ զանազան բարոյական, տնտեսական և կրօնական խմատներ և խորհուրդներ՝ բացայայտելով նոցա միտքը։ բաց յայսպիսի խորհրդաւոր ասացուածներից և աւանդութիւններից աւելացուցինք վերջումը քանի մի այլազգիներից դէպ ի մեզ եկած ազգ սովորութիւնները՝ մանաւանդ Արաբացիներից, Պարսիկներից, Թուրքերից և այլ Արևելեան ազգերիցը, որոնք ի վաղ ժամանակաց հետէ՝ մինչև ցայսօր, տարածուած են պառաւ և ռամիկ մարդոց մէջը, ցոյց տալով նոցա ստութիւնը և ունայնութիւնը, զգուշացուցանելով նաև այսպիսի արարողութիւններից, և յորդորելով նոցա մեր կարողութեանը չափ՝ դէպ ի ճշմարտութեան պարզ ճանապարհը։

Այս գործը թէպէտ և մեծ յանդգնութիւն է մեր չնչին կարողութեանը հետ համեմատելով, բայց մեր սրտի հիմնաւորուած ազգասիրութեան եռանդը՝ թոյլ

[illegible] Ա[illegible]ՆԻ և Ն[illegible]Ա Ա[illegible]ՅՆ մեջ՝ ունել են էրնել [illegible] Աշգ[illegible]ն [illegible]։

չէ տալի մեզ լռել այլոց զանազան մեղադրանքից, և աներկբայ է իրաւացի ներհակադրութեան (կրիտիկի) պատահելոյ համար. բայ որում ճշմարիտ և ուսումնական յանդիմանութիւնները՝ ոչ են մերժելի՝ այլ ընդունելի, մանաւանդ որ այսպիսի բառաւղղութիւնները՝ միշտ պատճառ են լինում գոնէ քայլ մի դէպ ի յառաջադիմութիւն ազգային գրականութեան և լուսաւորութեան մէջը։

Իսկ եթէ արժանի լինիմ սիրելի ազգակիցների կողմից մեծահոգի ներողամտութեան, այն ժամանակը լիովին աշխատանաց վարձը, և իմ անձին երջանկութիւնը ստացած կ'համարիմ ինձ։

Յովհաննէս Ա. Աբրահամեանց
Խոնարհաբար Սոյնով։

Մի անհաճոյք թուիցին քեզ առակք ծերոց, զի թարց պատճառի ոչ են ասացեալք։ · · ·

Թուխմայ Գնդեղեցի · գիրս ՝ ՀԸ ՝։

ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՌԱՇՆԵՐ ԵՒ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ։

Ա.

Ինչ ժամանակ որ մարդոյ երեսը սկսում է կարմրիլ կամ երվիլ՝ ասում են թէ „նորա վերայ խօսում են կամ բամբասում են“. — Սորանով կամենում են հասկացնել՝ առաջինը, թէ ամօթալի գործ ինչ արած ունի որ այլոց բանին խօսելու ժամանակին՝ նորա բնութիւնը զգալով ամաչում է և կարմրում է երեսը։ Երկրորդը՝ կամենում են նոյնպէս հասկացնել՝ թէ՝ բամբասանքն այնքան տգեղ բան է՝ որ մինչև անգամ խօսելու ժամանակին այն ինչ մարդոյ վերայ՝ նա ինքն հասկանում է որ իւր վերայ խօսում են։

Երբեմն ոչ ամենայն զորդ պէտք է զորձել, և ոչ այլոց բամբասել։

Գ.

Մինչ ժամանակ որ մէկի աչքերն քոր է գալի՝ ասում են թէ՝ նա պէտք լայ։ — Սորանով կամենում են զգուշացուցանել այնպիսի բաներից, որք լալոյ են արժանի. և մանաւանդ այս լայ լինելու նախագուշակութիւնն՝ կազանդի օրն է, որ է նոր տարին, որք իւրեանց զաւակացն աւելի զգուշացուցանելու մասին, ասում են թէ՝ „այս օրվայ լայ լինողը՝ բոլոր տարին լալով կ՚անցուցանէ, ուրեմն այն օրն պէտք է բարի և լաւագոյն զորձերով ուրախ և զուարթ անցուցանել. մանաւանդ որ իւրեանց ծնողքը՝ միշտ այս կերպ պատուիրում են զաւակներին։ Դարձեալ ասում են թէ՝ „կազանդի օրն ամէն մարդ պէտք է իւր տունն մէկ քաղցր ուտելու բան բերէ՝ որ բոլոր տարին ընդանիներովը իւր տան մէջը լիութեամբ և քաղցրավար անցանի բոլոր տարին“. որով այսու կրթում են զաւակներին աշխատանօք և սիրով ճաշ տան վերայ, և քաղցրութեամբ վարուիլ ամ ընկերների հետ։ Այս սովորութեանը վերայ մէկ աւանդութիւն ևս կայ, որ երբեմն մայրերը իւրեանց զաւակներու կամ թոռներու համար առակաս պատմում են, ասելով „մէկ կին ունէր որդի՝ որուն

„միշտ խրատում էր, որ տան վերայ աշխատասէր
„և սիրով լինի, և ամենայն օր դուրսից տուն գա-
„լոյ ժամանակին՝ դատարկ չի գայ տուն, այլ ինչ
„և իցկ իւր հետն տուն բերէ“։ Այս տղայն ամե-
նայն օր ինչ որ կարողանում էր աշխատել բոլորն
տուն էր բերում, մէկ օր այնպէս պատահեցաւ, որ
այս տղայն ոչինչ բան չ՚կարողացաւ ձեռք բերել,
այլ տարակուսած տուն դառնալու ժամանակին՝ մօր
պատուէրն միտքն ընկած սկսաւ այս և այն կողմը
նայել, մտածելով՝ իցկ թէ կարողանայ մէկ բան
գտանել, և յանկարծ տեսաւ որ ճանապարհին մէկ
սատակած օձ ընկած է. բայց որովհետև տանը մե-
ծացել էր՝ և օրն էլ անցել էր, չ՚կամեցաւ դա-
տարկ տուն գնալ. վեր առաւ այն սատակած օձն՝
մտաւ բակը (հայաթը) և ձգաւ տանիքի (կտուրի)
գլուխը։ Ինչ ժամանակ որ մտաւ տուն՝ մայրը ասաց,
„երգեակ այսօր ինչ ես բերել տուն“ որդին ասաց,
„մայր իմ այս աւուր բերածս տան յարկի վերայ է,
եթէ կամենում ես՝ գնա և տես“։ Մայրը կարծե-
լով թէ՝ ով գիտէ որդին ինչ է բերել, ուրախու-
թեամբ վերադառնում է տանիքը՝ և տեսնում է որ մէկ
ազատ նստած՝ սատակած օձին ուտում է, կինն մե-
տենալով ազատին՝ ազատն թողնում է օձին և
թռչում է. կինն տեսնում է՝ որ այն սատակած օձի
միս կողմամբ մէկ իւղթաթախ արծաթեայ դրգալ

բնկած է, իսկայն առնում է այն իւղաթաթախ գրը-
գալը, ցած է գալիս տանիքից և վազելով մտնում
է տուն շնորհակալութիւն է տալիս որդուցն և օրհ-
նութիւն է տալի. որդին ասում է „մայր իմ՝ այս
արծաթեայ դրգալը իմ բերածս չէ, այլ իմ բերածս
այն սատակած օձն էր. երևի թէ այս դրգալը այն
ագռաւն էր բերել, երբ որ տեսել է սատակած օձն՝
այս թողել է՝ և սկսել է այն ուտել. որովհետև
արծաթեայ դրգալը ուտելու բան չէ“: Այսպէս
մայրը և որդին երկուքն էլ ուրախանում են այս
հնազանդութեամբ պատահեալ վարձատրութեամբ վերայ:

Գ.

Ինչ ժամանակ որ մարդոյ ականջն ձայն է հանում,
ասում են „անունդ յիշում են կամ վերէդ խօսում
են“ և շատ անգամ ևս ասում են երբէք անգամ այս-
պէս „մահս միտս է“: — Որանով առաջինը ըզ-
գուշացնում են մարդոյ որ խնայած լինի, թէ՝ ինչ
մարդոյ վերայ նա որ խօսի, թէ բարի կամ թէ չար,
անպատճառ այն մարդոյ ականջն հասնելու է:

Ուրեմն պէտք է որ միշտ մարդոյ լաւն ասել:

Երբեմն ևս հաստատում են թէ՝ ամենայն ժամա-
նակ մարդ պէտք է մահն իւր մտքի մէջն ունենայ.
իսկ եթէ ոչ սովորական բնութիւնն այս կերպ պատ-
ճառաւ միտքն է բերում նորա զգուշութիւնը:

Դ.

Լիթ մէկի լեզուն քոր է գալի, ասում են թէ նա պէտք է կռուի մէկի հետը։ — Սրանով ևս զգուշացնում են, որ այն օրը ամենեցունցը հետ քաղցրութեամբ վարուի. չէիցէ թէ այն զուշակութիւնն իրաւ կատարուի։

Ե.

Հաց ուտելոյ ժամանակին՝ եթէ մէկի ձեռքից հացի կտոր, կամ դանակ, կամ պատառաքաղ վայր ընկնի ասում են թէ՝ հիւր (զոնաղ) է գալիս մեզ։ — Սրանով ևս ցոյց են տալիս որ շատ անչափ շտապում է հացն ուտել և աւարտել, որ և այն պատճառի էլ ձեռքիցը ընկնում է հացի կտորը. հանդարտութեամբ չուտելոյ պատճառաւն, երկմտելով՝ որ չէիցէ թէ յանկարծ մէկ ուրիշ մարդ գայ և մանակից լինի նորա սեղանիցն։

Զ.

Լրբեմն պատահում է որ հացի մէկ կողմն այրուած է լինում, որովհետև պատաւնները միշտ սովորութիւն ունեն ասելոյ, թէ՝ „ով որ այն այրուած հացն ուտէ՝ փող կ'գտնի. այս խօսքն լսելով երեխայքն ուրախութեամբ ուտում են այն այրուած հացի կտորն։

Իրաւի է՝ թէպէտ խիստ պէս փող չեն գտնում, բայց նոցա օգուտն այս է՝ որ առաջինը այրուած հացը չէ փչանում, և երկրորդ այն փողն որ պէտքէ հացի տալին՝ այս հնարով մնում է իւրեանց օգտի համար։

Ի.

Հմանապէս վարունգը (խիարը) եթէ պատահի որ փոքր ինչ դառն լինի, ասում են թէ՝ „առանց ոչ ոքի յայտնելոյ պէտք է ուտել, այն պատճառի որ ամենայն ցաւի դեղ է“։ — Այս ևս առանց պատճառի չէ ասած, էն մասին որ պատահած ժամանակին ուրախութեամբ կ'ուտեն, մանաւանդ երեխայքը լսելով որ ամենայն ցաւի դեղ է։

Հշմարիտ է՝ թէ և դառը վարունգը ուտելով ամենայն ցաւի դեղ չէ լինում, բայց չէ փչանում, և աւելի այն՝ որ օգուտ է բերում տնտեսական մասին։

Ռ.

Լրեկոյեան հաց ուտելու ժամանակից յետոյ, կասեն թէ՝ „սեղանը պէտք չէ թափ տալ, լաւ չէ“։ — Այս բառն լսելով՝ ամենեքեան երկմտելով, կարծում են թէ՝ ով գիտէ ի՞նչ կպատահի արդեօք։

Բայց միտք բանին այս է՝ որ չէրցէ թէ սեղանն թափ տալոյ ժամանակին, միջում մնացած լինի

գանակ, պատառաքաղ կամ գրպալ, որոց գիշերով չէ կարելի տեսանել, և այնպիսի բաներ կորուսանել։

Թ.

Այսպէս ևս՝ հաց ուտելոյ ժամանակին եթէ մէկի հացի կտորը աւելանում է, ասում են թէ հացիդ կտորը մի՛ թողնիր, եթէ ոչ „շունը ոտդ կ՚կրծի“։ — Սորանով ևս երեխաներուն երկիւղ են տալի։

Այս բանի միտքն այն է՝ որ հացի կտորներն չ՚թողնեն, այլ բոլորն ուտեն. և օգուտն այն է, որ հացն երբէք չի փչանայ այլ կ՚ուտվի. և այսպէս շատ մարդ լսելով իւր հացի մնացած կտորն՝ առանց ոչինչ թողնելոյ՝ ուտում է և շնորհակալ է լինում, որ այսպիսի փորձանքից զգուշացնում են բարեկամքն միմեանց։

Ժ.

Կամնապէս սեղանի վերայ թափուած հացի փշուրներն և կամ փլաւից մնացած բրինձներն, կ՚ասեն թէ՝ „ով շուտ հաւաքէ և ուտէ՝ նորա կեանքն երկար կ՚լինի“։ — Այս խրատը լսելով՝ երեխայքը սկսում են հաւաքել և ուտել, որպէս թէ՝ ծշմարիտ կեանքներն երկար կ՚լինի։

Օգուտն սորա այն է՝ որ հացի փշուրներն և բրնձի հատիկներն չէ՛ փչանում։

ԺԷ։

Լ՛թէ մէկը սեղանի վերայ միւս մարդոյ կծած հացի կտորն կամենում է առնել՝ ամենեին թոյլ չ՛են տալի, ասելով թէ՝ „իմ կծած պատառն է՝ եթէ կ՛առնես, աչքիցդ կ՛ընկնես“։ — Սորանով ևս կամենում են ցոյց տալ, թէ՝ ամենեին պէտք չէ աչք դնել ընկերոջը ուտեցածի վերայ, և ոչ ցանկանալ յափշտակել և կամ ձեռքիցը առնել նորա սեպհականը, որով իրաւի ընկերոջ կամ բարեկամի աչքիցը կ՛ընկնի։

ԺԸ։

Սեղանումը նստած հայ ուտելոյ ժամանակին՝ եթէ մէկը վերայ հասաւ՝ խնդրն հրաւիրում են նորան, որ իւրեանց հետն սեղանակից լինի. եթէ հիւրն չէ կամենում գալ և ուտել նոցա սեղանիցն. էն ժամանակը սկսում են հարկադրանօք ասել, „եթէ չէս գալ մեզ հետ միասին վայելել մեր սեղանիցը՝ մեր դուստրը ապաքաղաղ կ՛լինի և մարդոյ չի գնալ (առն չ՛լինել)։ — Սորանից երևում է մեր Հայոց ազգի հիւրասիրութիւնը. ինչպէս յայտնի է՝ որ բարեհաճութեամբ հետևում են հիւրին (զոնաղին) պատուել այնպէս, որ մինչև անգամ մեծ մեղք համարել նորա անրաժին թողնելն Աստուծոյ ընծայեալ պար-

գներիցն։ Զմանապէս սեղանի վերայ բազմած ժամանակին եթէ պատահող լինի՝ կ'ասեն թէ՝ զոքանչդ քեզ սիրում է. բայց եթէ սեղանից յետոյ հիւր գայ, նորան ևս կ'ասեն թէ՝ զոքանչդ քեզ չէ սիրում։

Որանից կարող ենք միայն այսպէս հասկանալ, թէ՝ ամենայն փեսայասէր զոքանչ, պարտ է իւր փեսային այնպէս սիրել, որ ինչ ժամանակ լաւ կերակուր կամ հացկերութիւն ունենայ՝ էն ժամանակը անպատճառ հրաւիրէ փեսային, որ միասին վայելեն ուրախութեամբ։

ԺԳ.

Տունը աւելելու (սրբելու) վերայ զանազան բաներ շատ կան ասած, որոց միտք բանին կարծեմ որ մի և նոյն են. ինչպէս որ կ'ասեն „տան աւելածը՝ գիշերով դուրս մի՛ տանիր թափելու". որպէս թէ՝ տան բարութիւնը (բարաքաթը) դուրս կ'գնայ, — և կամ թէ՝ տան սրբեալն՝ վառարանի (փէչի) մէջն մի՛ թափիր. — և կամ տունը սրբելից յետոյ՝ աւելը աղբի վերայ մի՛ դիր, լաւ չէ։

Որանց ամենի բացայայտութիւնն այն է, որ չէիցէ թէ մէկ բան կորած լինի՝ գիշերով դուրս տանուի թափելու կամ վառարանի մէջը ձգելով երուի. կամ աւելը վերան ծածկած լինելով՝ չեն կարող տեսանել

կարուած բանն։ և այնպէս անգիտութեամբ գուրս կ'թափեն և կ'կարուանեն։

ԺԴ

Կան ևս զանազան սնապաշտական կարծիքներ։ որոնք չ'ունին ոչ ուղղամիտ խորհուրդ՝ և ոչ մի ինչ օգուտ։ բայց և այնպէս արմատացած են ամբիկ մարդկանց մէջ՝ մանաւանդ պառաւ կանանց։ որք թէպէտ և ճշմարիտ ապացուցանելով՝ ցրուած են այն կարծիքները։ և հասկացնում են իւրեանց մոռածմունքի ունայնութիւնը։ Բայց այնու ևս չեն կարողանում փարատել իւրեանց սարակուսութիւնը։ թէ և բազում անգամ նոցա հասկացնում են։ և նոքա ևս յանձնառու են լինում առածներին։ ինչպէս որ և ինձ պատահել է շատ անգամ ներկայ լինել։ որ և պարտաւորութիւն համարելով՝ հետևել եմ ոչրնչացուցանել այն ամենայն ունայնամիտ կարծիքները։ թէպէտ երբեմն յուժարացել են ընդունել իմ առածները։ բայց ևս այնպէս մնացել են հաստատ իւրեանց կարծեաց վերայ։

Պատահեց ինձ երբեմն մէկ պառաւ կնոջ հետ խօսել ենջեցելոյ թաղման վերայ։ այս խոստկցութեան բոպէին կինը փրբշաեց՝ և խկոյն խնդրեց իւր կողքի հատած կնոջը՝ որ մէջբին ձեռքով խփէ։ բայց այն կինն ծանօթ էր իմ՝ առած այս տեսակ բանների ունայն

լինելն։ ասաց այն փրշտոգ կնոջն։ թէ՝ «քուրիկ ջան
ինչ օգուտ է մէջքին խփելը նընջեցելոյ վերայ խո-
սելու ժամանակին։ այն կինն պատասխանեց այսպէս։
թէ՝ «մէկ է խմանում, սիթագան բարբարան մնացած
բան է (այսինքն հին ժամանակից մնացեալ սատա-
նութիւն է) մէր ես այնպէս կասարում եմք»։
Բայց ես որովհետև ցանկութիւն ունիմ որ պատա-
հած ժամանակին այսպիսի ունայնամիտ կարծիքներին
մատնաւոր հակացողութիւն տալու։ իմ կարգու-
թեանս չափ այսպիսի կարծեաց սուութիւնը՝ և ընդ-
դէմ լինելը քրիստոնէական լուսաւորութեանը . . .
ասացի՝ «քուրիկ ջան եթէ լսել ես որ լաւ չէ նընջ-
եցելոյ վերայ խոսելուցը փրշտալն՝ և թէ անպատ-
ճառ պէտք է որ փրշտոգի մէջքին խփել։ լաւ չէ
որ երեսիդ խաչ հանես՝ և Աստուծոյ անունը յիշես
լաւ մտածիր և տես թէ՝ մէջքին խփելուցն ինչ օ-
գուտ է լինում, ի հարկէ որ ոչինչ օգուտ չ'կայ,
բայց որ Աստուծոյ անունը յիշես՝ և երեսիդ խաչ
հանես։ իսկոյն այն վատ և չար կարծիքը՝ մաքիցդ
դուրս կ'գայ, և ոչինչ չար բան չի հանդիպիլ քեզ։
Այս որ լսեց պառաւ կինը՝ իսկոյն երեսին խաչա-
կընքեց և շատ հաւանութիւն տուաւ ասածիս։ բայց
մի և նոյն բոպէին՝ տեսի որ այն խեղջ կինն հե-
տևելով որ մենք չ'տեսնենք՝ ծածուկ ձեռն տարաւ
յետի կողմն (քամակն) և ինքն իւր մէջքին խփեց։

մենք ևս այս տեսանելով՝ շատ զարմացանք, ծիծաղեցանք և ցաւեցանք. հիանալով թէ՝ տես որքան արմատացել են այսպիսի ունայն կարծիքները, թէ և հակառում են և յանձնառու են լինում ճշմարտութեանը հետևել. բայց և այնպէս միտքներն չէ հանգրստանում՝ մինչև որ չեն կատարում այն հին և ունայն սովորութիւնը։

ԺԷ.

Շատ անգամ պատահել է ինձ, որ մէկի հետ կամեցել եմք մէկ տեղ գնալ, կամ մէկ բանի վերայ խօսել, և կամ գործ ինչ կատարել, այն միջոցում իցէ թէ՝ յանկարծ մէկը փրշտեց մէկ անգամ. կ՚ասեն թէ՝ ապասենք փոքր ժամանակ „սաբր եկաւ“։ Բայց ես ներհակ լինելով այդպիսի կարծեացը՝ գնացել եմ այն իմ նպատակին, և լիովին բանիս կատարումն ընկալել եմ։ Երբեմն պատահած ժամանակին հարցրել եմ թէ, եղբայր՝ ինչպէս բան է՝ որ կարծում էիր, թէ այն գործը գլուխ չի գալ, որովհետև „սաբր եկաւ“։

Այս սատանիս պատահել է՝ որ երբեմն հաւանութիւն են տուել, և յանձնառու են լինել որ միանգամայն սատեն. բայց երբեմն ևս պատահել է այնպիսի ոք՝ այր կամ կին, ճշմարտելով ասել են, թէ՝ „սաբրն կամ ջահան (որ է երկու անգամ փրշտողն)

մէկի համար լաւ է լինում՝ միւսի համար վատ, որ է սուտ բոլորովին՝ և սուտ կարծիքը պահպանելու հնար, շատ անգամ ևս պատահել է որ մէկ բանի վերայ խօսելուց՝ երկու անգամ փրշտել են, բայց այն բանն չէ կատարուել։

Ժ.Օ.

Նմանապէս կայ ևս մէկ ազգ կարծիք, համարեա թէ առ հասարակ ամենեցուն մտաց մէջը՝ թէպէտ չե՛մ կարծում՝ որ այս կարծիքը սեպհական ազգային հնար լինի, այլ եկամուտ յայլ ազգերից, որպէս տեսանում եմք որ և ի միջի այլ ազգաց ևս կայ այս կարծիքը, բայց և այնպէս որովհետև մեր ազգի մէջ ևս հասարակեալ է՝ կամենում եմ սորա վերայ ևս փոքր ի շատէ խօսիլ, այսինքն է, եթէ ոք տանիցը դուրս է գալի իւր գործի գնալոյ համար, եթէ նորա առաջը դէմ եկաւ (պատահեցաւ) քահանայ՝ խակայն այն մարդոյ սիրան պղտորվում է՝ և ասում է, թէ՝ „այսօր գործս չի յաջողիլ“։

Թէպէտ այս բանիցս կարելի է խորին վարդապետական պտուղ քաղել, բայց ինչպէս որ երևում է՝ շատ ազգ և անձառնի կարծիք է, մանաւանդ՝ որ ոչ մի կերպ բանիւ հաստատութիւն չունի, այս պատճառի առաջինն ասեմ՝ որ շատ անգամ պատա-

հել է և ինձ. Մկի հետ տանից դուրս եկած ժամանակին մեր առաջը հանդիպել է քահանայ, իսկոյն միտին գնացող ընկերս՝ ծիծաղելով ասել է՝ „այսօր չի յաջողել գործերս“։ Բայց ես ասել եմ „ընկե՛ր՝ ընդհակառակն այսօր առաւել ևս կ'յաջողի գործերս... որովհետև մենք քահանային անպատկանելի խօսք չ'ասացինք և չ'արհամարհեցինք. այլ Նորան տէր և հովիւ ճանաչելով՝ ասացինք „օրհնեա՛ տէր“. նա նոյնպէս մեզ օրհնեց՝ ասելով „Աստուած օրհնեսցէ“։ Այ իրաւի որ այն օրն գործնէրս շատ յաջողակ էր. պատահել է որ կրկին անգամ ընկերոջս տեսել եմ՝ իսկոյն ասել եմ թէ՝ „այն քահանայի պատահած օրն ի՞նչպէս անցաւ գործդ. իրաւի խոստովանել է՝ որ շատ յաջողութեամբ է անցել Նորա համար այն օրուայ գործն. բայց միայն ասաց, թէ՝ „այն ևս Մկ առանձին պատահմունք էր, եթէ ոչ միշտ չէր պատահում որ այնպէս լաւ կատարուէր“։ Այս ասացի եղբայր դու ինքդ փորձած ունի՞ս, թէ՝ ուրիշներից ես լսել. Նա պատասխանեց, թէ՝ ես ինքս չե՛մ փորձել՝ բայց ամենայն մարդ այնպէս է ասում. և ես նմանապէս կարծում եմ թէ ճշմարիտ է։

Այս ասացի Նորան, ե՛ղբայր՝ „այլոց լսելով և կարծիք տանելով՝ ի՞նչպէս ես համարում հաստատ լինելն“. — առաջ հարկաւոր է փորձել՝ և յետոյ

հաստատութիւն տալ բանին»։ Դիմանապէս այլոց հետ ևս պատահել է շատ անգամ նոյն կարծիքի վերայ առարկայ կամ խօսակցութիւն, բան կարողութեանս չափու՝ հետևել եմ ունայնացնել միանգամայն այս-պիսի ունայն կարծիքները. թէպէտ ասելոյ ժամանակին չէ՛ն ներկայացել՝ և յոժարութեամբ յանձնառու են եղել ընդունել իմ ասածներս. — բայց այն կարծիքն հաստատ արմատացել են ի վաղ ժամանակաց հետէ իւրեանց սրտերի մէջը. ինչպէս որ յայտնի ապացոյց է եղել կրկին անգամ այսպիսի ունայն խօսակցութեանց վերայ։

Բայց ինչ որ օգտաւէտ վարդապետական խորհուրդ քաղել կարելին է՝ բան իմ կարծեացս կարոգանամ ասել՝ այսպէս։ — «Որովհետև Քրիստոս Տէրն մեր՝ իւր սուրբ աւետարանական քարոզութեամբը հիմք դրաւ հոգևոր ազգատութեան վերայ, այնպէս մէկ խելօք մարդ խորհրդարար ասել է, թէ՝ «քահանային պատահած օրը մարդոյ մարմնաւոր գործքը՝ չի յաջողիլ»· այն պատճառի որ եթէ դուրս գալու լինես տանիցն՝ պատահի քեզ կարոտեալ ոմն՝ և խնդրէ քեզանից օգնութիւն, էն ժամանակն ի հարկէ որ գու նորան ողորմութիւն տալէն յետոյ մարմնաւոր գործոցդ յաջողութիւն չի երևիլ, բայց միայն հոգիդ ունի մեծ օգուտ. այսպէս և բան երեւութին գործդ չ՝յաջողած կ՝երևի։ Այսպիսի մեաց

վերայ հաստատ մնալով թէ և յաջողի գործդ և կամ թէ ոչ յաջողի մարմնաւոր գործդ՝ չ՚կարես կարծել որ այս պատահել է այն պատճառիցը՝ որ քահանայ պատահել է քո առաջեդ. կրկին անգամ և պատահելու ժամանակին ուրախ լինես։

ԺԷ.

Աստպիսի քանի մի ևս կարծիքներ կան կանանց սովորութեան մէջ. թէպէտ ոչինչ իմաստ և կամ թէ ոչ մէկ ներգործութիւն չ՚ունին, բայց այնպէս հաստատ հաւատացած են՝ իցէ թէ մէկը ներհակ մէկ բան ասելու լինի՝ ամենևին ականջ դնելու չ՚են. կ՚պատասխանեն թէ՝ „մեծերի կամ ծերերի ասած խօսք է“, այնպէս պինդ պահում են միտքներումը և կատարում են անթերի. այսինքն ծննդաբեր կնոջ յաւ քաշելու ժամանակին զանազան հեթանոսական արարողութեամբ՝ վազում են դռների գլխին մոմ են վառում, արկղների (սանդուղների) և այլ դռների կողմերքն բացում են, կարծելով թէ՝ դուռներն և արկեղներն որ բացուած լինին, այն ժամանակը ծընընդաբեր կնոջն ազատութիւն կամ օգնականութիւն կ՚հասնի և շուտով յաւիցը կպրծնի. թէպէտ ծնողքը իրենց դաւակների սիրոյ պատճառաւ են այս բաները անում, բայց հետևողութիւնները այն է, թէ՝ որով և իցէ կերպիւ մին օգնութիւն կարողա-

նան հասուցանել իւրեանց զաւակներին. բայց շատ տղեղ և ամենեին ունայն և հեթանոսական կարծիք է, և ընդդէմ ուղիղ Քրիստոնէական ճշմարիտ դաւանութեան։

Բայց որովհետև ծնողքը ցանկանում են օգնութիւն հասուցանել իւրեանց զաւակներին, փոխանակ այսպիսի սնոտի զորձոց և արարողութեանց՝ բարւոք է որ աղօթք անեն և առ Աստուած աղաչեն՝ և միւս ևս կողմից ձեռն արկանեն հմուտ բժիշկների խորհուրդները կատարեն։ Այս իսկ փորձիւ գիտեմ քանիցս անգամ այսպիսի միջոցի մեր ևս ընտանի կանայքը կամեցել են իւրեանց սովորական բաները զործ դնել, բայց դէնի յանդիմանութեան՝ մնացել են տարակուսանաց մէջը. և իւրեանք ևս խնայել են իւրեանց տգիտութեանը և արարմանցը։

Լրբեմն ևս պատահել է, որ մինչև անգամ փակած արիդի վերայ բնդ հակառակն շատ դիւրին և թեթև ցաւոք ապաստութիւն է տուել Աստուած, մինչև որ ամենեքեան յոյժ զարմացած են մնացել։

ԺԲ.

Ամենապէս ծննդաբեր կնոջ ապաստելուց յետոյ՝ մինչև երեխայի մկրտութեան օրը, շատ սասիկ բկ-

գուշութիւն են ունենում, — չէին թէ մէկը դուրս եր ելեխայի մօտ գայ՝ ունենալով իւր մօտը բանալի կամ կնիք, (մուհր կամ պեչատ) և կամ այլ ինչ սոցա նման։ — Այս մասին կ'ասեն թէ՝ „երեխայի բերանը (կամ իշտահը) կ'փակուի՝ և ծիծ չի կարող ուտել (ծծել). — և կամ թէ՝ բերանը կ'փրփրի". որ է բոլորովին սուտ և ունայն կարծիք։ Այս որում ես զիտութեամբ շատ անգամ փորձառութեան համար՝ զնացել եմ նորածին երեխայի մօտ, տանելով ինձ հետ բանալի և կնիք ծիծաղելու համար՝ կանանց կարծամտութեան և թերահաւատութեանը վերայ. որպէս երեխայի մօտը նոյնպէս և ծննդարերի մինչև մկրտութիւնը։

Այսպէս ևս եթէ մէկը ննջեցելոյ տունից՝ կամ այլ ծննդարերի մօտիցը գալու լինի, կ'ասեն թէ՝ „երեխայն քառասունք կ'ընկնի". այսինքն՝ կ'հիւանդանայ կամ կ'մաշուի ցաւով. և թէ ծննդաբեր կինն նմանապէս քառասունք ընկնելով՝ այլ ևս չէ կարող յղանալ (ք երկուհոգիանալ) և ծնանիլ. որ է սուտ և յիմարական կարծիք. օրոց ստութիւնը կարելի է ապացուցանել՝ այս հասատատ և յայտնի բանին։ Այսինքն շատ անգամ պատահում է որ քահանայն գալիս է ծննդաբերի տունը օրհնելոյ. թէ ննջեցելի և կամ թէ ծննդաբերի տանից. ոչինչ

փորձութիւն չէ պատահում։ Այս ամենայնը՝ ա սելու ժամանակին ինքեանք ևս տեսնում են, որ բոլորը սուտ են այս ամենայն մտածեալ բաները. բայց և այնպէս այն հին մոլորական կարծիքներ՝ ի բաց չեն թողնում։ Այսպէս երեխային և կամ մը՝ ը՝ մէկ չնչին տկարութիւն պատահելոյ ժամանակին՝ խսկոյն պատճառելով ասում են, թէ՝ „քառասունք է ընկել“. և սկսում են ևս տաւել ունայնամիտ գործեր առնել յօգնութիւն հիւանդին կարծելով՝ ըստ իւրեանց հին սովորութեամբը. որ է ընդդէմ Քրիստոնէական հաւատոյ, և ողջամիտ դատողութեան ամենայն խելացի մարդոյ։

ԺԹ.

Ծննդաբեր կնոջը միայնակ չեն թողնում մինչև երեխայի մկրտութիւնը, նմանապէս՝ երեխային ուրիշ տուն կամ սենեակ չեն տանում՝ միայն այս պատճառելով, թէ՝ „լաւ չէ“։

— Այս ևս թէպէտ ոչինչ հիմնաւոր միտք չունի, բայց միայն այս է օգուտն, որ ծննդաբեր կինն միշտ կարօտ է այլոց օգնականութեանը, այն պատճառաւ, որ ինքն ինքեան ոչինչ առնել չէ կարող. այս մասին հարկաւոր համարելով՝ պէտք է մէկը միշտ նորա մօտը անպակաս լինի։

Ասցց կարելի է սարանից քաշել՝ նա ևս հոգևոր պատուգ։ այսինքն նորածին մանուկն և մայրը՝ որով հետև նոր եկել են յաշխարհ։ մեկը մնանելով՝ միւսն ի մահուանէ ազատելով։ չեն կարոգանում ապահով լինել։ մինչև որ մկրտութեան ասուրը խարհրդով չեն յանձնուում Աստուածային նախախնամութեանը՝ և ազատ ազատ են լինում ամենայն չար պատահարից։

Ի

Երեխային պատահի գիշերով այլ տեղ տանելու լինեն՝ ճակատին խաչ կքաշեն սնուցի (գործելի) մրով։ և ձայնն մեկ կոտոր հաց կդնեն ասելով։ թէ՝ „երեխայն չի՛ վախենալ“։ — Այս սովորութիւնը թէպէտ անտի երկիւղից է յառաջանում։ այսինքն վախենում են երեխային գիշերով ասենցը զուրս բերել։ որ է ունայն երկիւղ։ բայց սարանից խոր հրդպատուր պատուգ կարելի է քաշել։ այսինքն ամենայն Վերխատնեաց որ ճանապարհորդ է յիշատում՝ այս անցատոր կենցաղումը, պարատուր է Միշտ ունենայ իւր մտաց մէջը համբերութեան խաչը՝ և Աստուածային բանից հոգևոր հացը։ և ի ժամ իւրց մահատանը՝ նոյնպէս իրը ճանապարհորդ ատսի կենաց ի յաւիտեանական։ չի մոռանայ իւր հոգևոր գէնքը և

Թուշակը։ պսակը (հարսանը և պուշարը) որ կ խոր հուրդն ուրբ եկեղեցւոյ՝ վասն հաստատեալ քրիստանէից։

ԻԸ։

Երեխայի ատամը (կոսիքը) նոր գուրս եկած ժամանակին։ (հատիկ կամ չաչա են անում) պսակը ցորեն կամ պլ ինչ բոլում են իրը թէ՝ այն հատիկները ճեղքուելով՝ երեխայն իւր ատամները գիւրին հանի։ և պլ ևս կիսարով ունդերը՝ խառնելով պլ քաղցր բաների հետ։ հատացնում են երեխային մէկ տեղ և շուրջը շարում են զանազան բաներ՝ պսակը՝ զանակ։ մկրատ։ բանալիք։ գիրք։ թանաքաման և պլ ուցա նման խազալիք և կամ զարդիք։ և այն պատրաստած քաղցրեղէնը թափում են երեխայի գլխին։ և ապասում են տեսնեն թէ՝ երեխայն արդեսք ինչ բան կ'առնի ձեռն այն զարդիքներիցը։ որ նորա չարս բալարը շարած են։

— Երեխայն անգէտ զալով՝ առնում է երբեմն զանակ կամ բանալի։ երբեմն թանաքաման կամ գիրք ևն։ Հետոյ սկսում են զուշակութիւն տալ պսակէս։ եթէ մկրատ է տեսել ձեռը։ կ'ասեն թէ՝ «գերձիկ կ'լինի»։ — եթէ գիրք՝ «Տպագրատան»։ և այլն և այլն։

Այս նշանները և կարծիքները՝ թէպէտ ճշմարիտ նշանակութիւն չ՚ունին, բայց ծնողքը կարող են օրինակ առնել իւրեանց համար ամենահարկաւոր պարտաւորութեան խրատներ. այսինքն զաւակացը զարգացնել և ջանալ ուսուցանել յիւրում ժամանակին. և ունենալ արթուն դիտաւորութիւն՝ առ ի տեսանել և իմանալ, թէ՝ զաւակունքն ո՞ր բանի կամ գործի վերայ ունին աւելի սէր և ընդունակութիւն, եթէ դէպ ի չարն իցէ այն՝ խափան արգելել նոցա, իսկ եթէ առ ի բարին և գովելին՝ այսինքն ուսումնասիրութեան և կամ այլ ընտրեալ արժանագով արհեստին. էն ժամանակը ամենայն ջանացողութեամբ հետևեն բանալ և պատրաստել նոցա գիւրին ճանապարհ դէպ յաշխատութիւն. և խրախուսել նոցա՝ որ միանգամ կարողանան յաջողակութեամբ հասանել իւրեանց նպատակին. և ոչ թէ ինքեանք ընտրեսցեն վասն նոցա վիճակ՝ զորս ինքեանք իսկ կամին, և որ իւրեանց գրութեան համեմատ և յարմար են. վասն զի առ որս ունին յաջողութիւն յատաջանալոյ երբեմն արգելեալ լինին ի ծնողաց։ Իսկ որք ստիպմամբ ուսանին՝ չ՚ունելով ընդունակութիւն յայնմ, բնականապէս մնան անկատար և անպիտան. ոչ թէ միայն վասն ծնողաց իւրեանց՝ այլ և վասն հայրենեաց իսկ։

ԻԿ.

Լթէկ մէկի աչ ձեռի մէջը քոր է գալի՝ ասում են թէ՝ „ձեռիդ մէջը փող կ'գայ“. իսկ եթէ ձախը՝ կ'ասեն թէ փող դուրս կ'գայ ձեռիցդ։ — Սորսնով կամենում են հասկացնել թէ՝ աշխատանքդ. եթէ բարի բանով կ'լինի, (որ է աչ), բանդ ևս կ'յաջողի և արդիւնաւոր կ'լինի. իսկ եթէ վատ և չար կ'աշխատես (որ է ձախ), անարդիւն կ'լինի գործդ՝ և ինչ որ ունիս ձեռիցդ կ'գնայ բոլորն։

ԻԳ.

Լթէկ մէկի աչքը պշուցեալ հայելու լինի „մէկ բանի վերայ առանց նպատակի (որ հասարակաբար ասում են թէ՝ „աչքդ ճանապարհ է քաշում“). կամ թէ՝ մէկի կոկորդը (բողազը) քոր գայ կ'ասեն թէ՝ „ճանապարհորդդ կ'գայ և կամ սողվաթ (ճանապարհորդի բերած ուտելիք) կ'ուտես“։

Այս ասացուածի միտքն այն է նշանակում, որ սպասում է իւր բնդանուոյ գալստեանը, այլ ինչ քաղաքից կամ ճանապարհից՝ որ է խրախոյս համբերութեան։

ԻԴ.

Տանը կատուն՝ երբեմն որ երեսը լուանում է իւր

թաթիկովը՝ ասում են թէ՝ „Հիւր (զոնաղ) կ'գայ“. նմանապէս առնը առեալ ժամանակին՝ եթէ առելիցը մէկ կարը մնացած լինի տան սրբած տեղումը, նոյն օրինակ ասում են, թէ՝ „Հիւր կ'գայ. այս աստծնեարը այն պատճառի են՝ որ տան կառավարիչը միշտ հեռուզութիւն ունենայ առնը մաքուր պահելու, և ինքն էլ պատրաստ լինի՝ որ եկող հիւրին առանց ամօթոյ ընդունել կարողանայ. որպէս տանը կառուն սովորացնում է, եթէ հիւր գալու լինի, խատակ և մաքուր գոնի ամենեցուն՝ և ոչ թէ անպատրաստ։

ԻԸ

Տան կանանց կամ աղջկանց փոքրագոյնը, որուն որ տան կառավարութիւնը՝ և կամ կերակուր եփելու պարտաւորութիւնը՝ չէ յանձնուած տակաւին, թէ որ պատահի առաջի անգամը մէկ բան պատրաստէ նա, կ'սկսին ասել ամենեցուն ծաշոզներին, թէ՝ այս (ինչ անուն) աղջկանս պատրաստած կերակուրն է. ով որ որ ուտէ՝ նորա գլուխն երբէք չի ցաւիլ։... — Այս լսելով՝ ամենեքեան ուրախութեամբ սկսում են ուտել, և այս խօսքով ուրախացնում են տան աղջկանը, որ նա ևս առաւել սկսում է կառավարութեան գործերին ձեռնամուխ լինել, և զանազան

կերակուրների պատրաստելը սովորել՝ և այլ անցին գործերը կատարել։

ԻՕ.

Վարդան ժամանակին՝ ինչ և իցկ ծառի պտուղ այն տարուայ առաջին անգամը որ ուտում են, որուն (նուկբար) նախաշաս պտուղ են ասում, մէկը գալիս է ծածուկ ուտողի յետի կողմից նայում է՝ և ուտելու ժամանակին՝ խելոյն ականջիցն քաշում է ասելով՝ „նուկբար ես ուտում, շատ մի՛ կեր՝ լաւ է“։ — Սորանով զգուշացնում են առաջինն՝ որ շատ չուտէ, որովհետև կարելի՝ է խակ լինի. և երկրորդ՝ կամին մնաբերել որ փառք տան Աստուծոյ և գոհանակ լինին՝ որ արժանացել են կենդանի մնալ և վայելել նորաշաս պտուղներն, ինչպէս անցեալ տարիները։

Ուրեմն ամենայն մարդ պէտք է ինքն ևս հետևի՝ որ աշխարհումը բարի գործերով յիշատակ թողնել, որ այլքն ևս վայելեն. և ինքն ևս հաճոյ լինի Աստուծոյ՝ իւր կենաքը. որովհետև ինքն ևս ոչ այլ ինչ է, եթէ ոչ, բանաւոր ծառ Աստուածատունի։

Կան ևս բաղմատեսակ կարծիքներ՝ հասարակ կանանց և կինաբարոյ արանց միջումը, որ առանց հիման և ճշմարիտ ապացուցի հաստատում են, և հետևում են հնագոյն հեթանոսական մոլորեալ կար-

ծեաց և աւանդութեանց · բայց իրաւի բաղումք ի նոցանէ ակամայ և բռնադատեալ ի բնական հիւանդութեանց և կամ այլ ինչ պատահմանց, որոց պատճառն ոչ տեսանեմ բնական աղգային սնապաշտական բնաւորութիւնն · այլ հասարակ խաւար՝ ներկայ ժամանակիս լուսաւորութեանց մէջը · պատճառը այն է որ, մանաւոր ծանօթութիւն ունեցողներն՝ Լուրոպական լուսաւորութիւններիցը, այնպիսի սիմպատիական կարծիքները արհամարհում են։

Իկ

Ի պատահիլն թեթև ինչ հիւանդութեան և կամ գլխացաւութեան, կանայքը խիզոյն ասում են, թէ՝ „նիեաթ է“, այսինքն աչքով են տուել, փոխանակ ասելոյ թէ՝ չար աչքով նայել են, . . , սկսում են դանակով կամ ասեղով և կամ այլ ինչ զործիքով՝ աղօթել հիւանդին · զանազան սովորական աղօթքներ ասել և արաշկոտել, որով հաստատում են թէ՝ իրաւի չար աչք է դիպել — (նիեաթ է), և այնպէս համարին օգնութիւն հիւանդին · և այնօրինակ՝ կախում են վզիցը ապր (ՙ աչքհալունքը) կարծելով թէ՝ օգնութիւն կ'լինի հիւանդին · որ է սնոտի հեթանոսական աւելորդապաշտութիւն։

ԻԸ։

Երբ որ մէկ մարդ կամ կին վախենում է մէկ բանից՝ կանայքը ասում են, թէ՝ „պէտք է վախը թափել“, այսինքն՝ պէտք է մեղրամոմը հալել և ածել մէկ բաժակի մէջը, որ լիքն է ջրով, և այս պէս մինչև ինն անգամ թափում են, ուստերի՝ սրտի՝ թիկնամէջի և այլ տեղերի վերայ, թափում են հալած մեղրամոմը՝ սառը ջրոյ մէջը, և գոյանալով ձեւանում է զանազան խառն տեսակ բաներ. ուստի գուշակում են պատճառներ վախեցող հիւանդին՝ ասելով, թէ՝ „այս ինչ կամ այն ինչ բանից վախացել է“։ — Որ է նմանապէս ունայն և սնոտի սարսռոցութիւններ և ոգիտաց հաւատալի կարծիքներ։

ԻԹ։

Այսպէս ևս եթէ պատահի մէկին տկարութիւն անյայտ պատճառից, զոր օրինակ՝ եթէ սկսի ամենայն որ գլուխը ցաւել, սիրտը թափ տալ, ծնկները թուլանալ և այլ այսպիսի նման բաներ պատահել. թէ և այս ևս է բնական տկարութիւն բնութեան պատճառեալ՝ որպիսի և իսկ անբարեխառնութեանց։

Բայց նոքա ասում են թէ՝ „ծանրութիւն է նըստել“, մանաւանդ որ եթէ այն միջոցին պատահել է հիւանդին ննջեցեալ տեսանել. հաստատ այն կար-

ծիրը՝ ապատարում են միտքերում և սկսում են ձեռնամուխ լինել դանազան անոսի արարողութեանց, այսինքն՝ ձեռներըր և ոտներըր լուանում են ջրով, և այն ջուրը թափում են չորս փողոցի (ՅՐ ՔՈՒՉՅԻ) բերանումը, և պատաւ կանայքը գալիս են թելով չափում են հիւանդի երկայնութիւնը և լայնութիւնը, և ապօթում են, և եղունկները կարում են և այն չափած թելի հետը՝ տանում են գերեզմանատանը թաղում են. իսկ թէ՝ այս բաներովը ևս հիւանդը չէ առող ջանում՝ յետ այնու հիւանդին տանում են գերեզմանատուն, ձեռքը և ոտները լուանում են՝ նոր թաղած ենջեցեալ գերեզմանի վերայ. մանաւանդ եթէ խեղդուած մարդոյ գերեզման լինի, կասեն թէ՝ „շատ մեծ օգուտ է“. և սորանց ամենի պատճառն էլ ասում են թէ՝ „ծանրութիւն է նրատել“։ — Որ է սուտ և ունայնական կարծիքներ և անհիմն արարողութիւններ, որ և զկնի ոչ ջախող մտածողութեան տեսանելմք՝ որ ընդդէմ է Քրիստոնէական հաւատոյ՝ և առող ջ դատողութեան ամենայն զգոն և խելացի մարդոյ։

Բայց միւս կողմանէ ասել կարելի՝ է որ ճշմարիտ է այդ կարծիքը՝ զոր ասում են թէ՝ „ծանրութիւն է նատել“, բայց ոչ այն մտաք՝ որպէս կարծեն թէ ենջեցեալ ծանրութիւն է, բայց՝ այլ ինչ կերպիւ, ես այս ծանրութիւն անուանը՝ այսպէս եմ կար-

ծում՝ որ հիւանդին վերայ կարելի՛ է հնարած լինի մէկ խելացի և բարեմիտ անձն, այն դիտաւորութեամբ՝ որ ամենայն հիւանդ կարող է համարել իւր ակարութիւնն՝ բաց ի բնական պատճառից, նաև ի ծանրութենէ մեղաց յառաջացեալ. իրաւի որ ի բազմանալ մեղաց մերոց՝ ծանրաբեռնելով զմեզ պատճառում է ոչ միայն հիւանդութիւն հոգւոյ՝ այլ մարմնոյ ևս, բան այնմ՝ „ահաւասիկ ողջացար այլ մի՛ ևս մեղանչեր, զի մի՛ ևս չար լինիցի քեզ“։..

— Այս մտօք կարծողը հիւանդի ծանրութեանը՝ չէ՛ պարտ այնպիսի ունայն արարողութեամբ հետևել հիւանդին օգնելու, այլ՝ եթէ համարում է ծանրութիւն, ահա՛ դիւրին և օրինաւոր հնար թեթևութեան. այսինքն ուղղելով իւր վարքը առ բարին, խոստովանի իւր յանցանքը՝ առաջի Աստուծոյ և քահանայի, ապաշխարի իւր մեղքը, հաղորդուի կենարար փրկչի սուրբ մարմնոյ և արիւնիցը և բաշխէ զողորմութիւն աղքատաց, որով այսու ամենայնիւ ճշմարտապէս լինի թեթևութիւն, ոչ միայն մարմնոյ՝ այլ և հոգւոյ իսկ։ — Եւ այնուհետև կ՚առողջանայ հոգւով և մարմնով՝ և կ՚տեսնէ այն ունայնամիտ արարողութեանց ոչնչութիւնը։

Լ.

Լայսպէս ես՝ ի պատահիլն զանազան հիւանդութեանց՝ անյայտ պատճառներից և կամ ի վախենալոյն կամ այլ ինչ սոցա նման պատահմունքներից, խնայպէս ոչ խմանալով պատճառը հիւանդութեան, և ոչ զցաւն ախտացելոյն. համարին թէ՝ գիւտարեալ է կամ գիւական հիւանդութիւն ինչ է, մանաւանդ եթէ հիւանդն լինի մանաւոր մտացնոր՝ կամ լուսնոտ և կամ խելագարեալ նշաններով. խոկոյն զայս կարծիքն հաստատ են համարում, կոչելով զնա հասարակաբար թէ՝ „գիրի բան է“. որով ճշմարտեն գիւական ախտիս հիւանդացեալ. և սորա հնարը առոյ ջանալոյ կարծեն՝ ոչ այլ ուստեքէ, մի միայն գիր բացողներին դիմել՝ որով խմանան անուամբ (ազթարք) և կախարդական գիր, և խնդրեն գիր բացել՝ և գիր անել հիւանդին. ողորմելիքը՝ ոչ գիր գիտեն և ոչ զօրութիւնն Աստուծոյ, որ ինչ միանգամ չեն հասկանայ ի բնական պատճառիցն և հիւանդութեանցն. կ'համարեն թէ՝ գրի բան է, որպէս և գիր բացողներն զոլով ագէտք և անուսումքն՝ ունելով ի ձեռս իւրեանց քանի մի հին ձեռագիրներ քաղդէացւոց, և տեսանելով ի միջի նոցա զանազան գոյն գոյն տառերով և գիւական արկեանեներով գրած բաներ, ինքեանք կարդալով զայնս՝ և

շատ ևս աղօթքներ քաղդէացւոց բարբառաւ Ի բե-
ռան սերտեալ, և այլ ևս յիմարական այլանդակ և
դիւական պատկերներ նկարագրեալ այն գրքերի մէ-
ջը ցոյց տալով, զկնի այնորիկ զանազան աղօթքներ
ևս քրիստոնէական. նմանապէս զանազան գիծէր այ-
սինքն խաչեր և այլանդակ գրեր քաշած տեսանելով
թլխամը անուանելով՝ կարծեն թէ ունին զօրութիւն
ինչ այն գրուածոց մէջը, և ինքեանք ևս սովորեալ
քանի մի այնպէս գրեանց տեղորայս հմարին գիտա-
ցողք ամենայն զաղանեաց և հիւանդութեանց, և
ձեռնամուխ լինին հիւանդին գիր անել, այսինքն հի-
ւանդին միայնակ և հանդարտ պահել. ուտելիքը
պակասեցուցանել, թուղթեր գրեալ տան հիւան-
դին պատուիրելով նոցա՝ որը ջրով խմել, որը ծը-
խել և այլ մեացորդքը վզեայը կախել՝ կամ հան-
դերձի մէջը կարել՝ մէկ քանիսն էլ թաղել տան-
ձին տեղ։

Ուստի շատ տեսակ տեսակ արարողութիւններով
պատահում է՝ որ երբեմն հիւանդն առողջանում է
բնականապէս, որպէս և ախտը ևս է բնական. բայց
կարծիքը ռամիկ ժողովրդոց՝ մեռում է հաստատ նոցա
մտաց մէջը. համարում են թէ՝ այն ախտը դիւա-
կան է, և բժշկութիւնն ևս կախարդական, և այս
սովորութիւնը կարծեաց որպէս և արհեստը (եթէ

կարելի է անուանել արհեստ), յայտ է նմանապէս, որ այս չէ ազգային բնաւորութեան գիւտ, այլ եկամուտ ի քաղդէացւոց հնագոյն սովորութենէ, որպէս և անունը „քաղդիայ“ ցուցանէ այն իսկ։

Այս սովորութիւնը կամ կարծիքը՝ ոչ միայն ի միջի ազգիս տարածեալ տեսանի, այլ և ի միջի հասարակ ամենայն արևելեան ազգաց՝ և է ցրուեալ. և որպէս բնական ախտ ինչ ի պատահիլն այսպիսի հիւանդութանց՝ համարին լինել գիւական այցելութիւն. ձեռն արկանեն զանազան հեթանոսական արարողութեանց, որպէս ի վերոյ ասացի թէ՝ ախտն այն բնական լինելով՝ բնականապէս ևս առողջութիւն է ստանում, և այս յայտնի է հասարակապէս ամենայն ուսումնասէր անձանց, որոնք կարդացել են փոքր ի շատէ ներկայ ժամանակիս լուսաւորեալ նոր բաղիւտ բժշկականութեանց գրեանքը. քանզի յայտ է ի բժշկարանաց՝ որ այսպիսի ցաւք պատահում են զանազան անբարեխառնութիւններից մարդկային խառնուածոց և ի բորբոքմանէ արեան և ուղեղի, որոնց առողջանալոյ հնարքերը յայտնի է։ Դաջինը հեռևում են արիւն թողուլ և նուազացնել հիւանդին պէսպէս դեղորայքով և ուտելիքով՝ մանաւանդ եթէ առանձին և հանդարտ պահեն. որպէս տեսանում ենք խելագարների համար պատրաստած

խելաժեստաուներբ. շատ անգամ ևս օգնում է այն-
պիսի հիւանդներին զանազան թափանցիկ սրահոտ դե-
զորայքը, որպէս վկայում է Պետրոս Վալանթարեա-
նը իւր բժշկարանումը՝ որ տպեալ է ի նոր Ղախ-
ջեւան։

Ի բժշկարանի յայնմիկ ասէ բնդդէմ լուսնոտու-
թեան՝ պահել հիւանդի մօտ „քաֆրիւ և զան-
դուզզարայի“, — շատ օգուտ է ասէ՝ որոյ և փոր-
ձքն առեալ է իսկ. որպէս քաֆրին և զանդուզզա-
բային զոլով սրահոտք և ազդուք, ոչ սակաւ օգնեն
հիւանդին. որպիսի են և այլ նոյնպիսի սրահոտ դե-
զորայք. մուշկը և քրքումը (զաֆրանը), ինչով
որ միշտ գրում են գիր անուղղերբ՝ իւրեանց խմացած
աղօթքներբ և թալիսմաններբ, և հրամայում են հի-
ւանդի մարմինը (անձը) տրորել, ծխել և ջրով
խմել, և կամ պահել անձնի վերայ։

— Սորանով կարելի է որ պատճառ լինի առող ջա-
նալոյ, ոչ թէ զօրութիւնը այն գրութեան, այլ մի-
այն հոտը այն վերոյիշեալ ազդու դեզորայքի, իսկ
նորանք կարծում են թէ զօրութիւն գրոյն է առող-
ջութիւն տուողը։

Այսքանս բաւական եմ համարում իմ կարողու-
թեանս չափով, թողնում եմ այլ շատ սորանց նման
ասացուածները, արարողութիւնները և աւանդու-

թիւններբ · որոնց միտք բանին շատ փոքր կամ խ-
սպառ արժան չ՝համարելով մեռագրութեան ընթերցո-
ղաց · գուցէ և բոլոր այս աշխատութիւնս դատարկ-
խոսութիւն համարիցի · վասն զի վաստակն մեր
ոչ է վասն զիանականաց և ներհունաց՝ այլ հասա-
րակ ժողովրդոց · յուսալով միայն ներողամտութեան
առաջնոցն և բարեհաճութեան վերջնոցն ։



Վրիպակք տպագրութեան ։

Էրես ։	Տող ։	Սխալ ։	Ուղիղ ։
1	4	Տնտեռական	Տնտեսական
1	6	ազգային	ազգային ·
7	8	կամ հում	կամ հում ·
12	1	խխապէս	խկապէս ·
12	2	այո է	այս է ·
25	1	փործութիւն	փորձուի ։

891.99-1
Ա- 85

Գին 1-ից-ՀԼ-ից է 25 կոպեկ տե՛ս-ի։